


«ԳԼԱՁՈՐ»-20

Ուղիղ երկու տասնամյակ առաջ՝ 1990թ.-ին, երբ փակվում էին տարբեր կազմակերպություններ, երբ գոյատևման պայքար էին մղում շատերը, երբ լուսավորության կարոտ էր մի ամբողջ ժողովուրդ, գիտության լույսի մի շող առկայծեց Երևանում. հիմնադրվեց «Գլաձոր»



կառավարման համալսարանը: Կրթության կաճառ, որ ի սկզբանե նպատակ ուներ

կրթական բարձր մակարդակով, որակյալ պրոֆեսորադասախոսական կազմով, հարուստ ուսումնական և առարկայական ծրագրերով, գիտական ներուժով դառնալ պատմական Գլաձորի արժանի փոխարինողը: 20 տարիների ընթացքում համալսարանի ղեկավարությունն ու ամբողջ կոլեկտիվը հետևողականորեն և հաստատականորեն ձգտեցին իրագործել միջազգային չափանիշներին համապատասխանող ուսումնագիտական գործընթաց: Հաջողվեց: «Գլաձորն» այսօր ունի մեծ համարում և իր արժանի տեղն է զբաղեցնում հանրապետության բուհական համակարգում: «Գլաձորը» սկսեց գործել՝ նպաստելով բարձրագույն կրթության զարգացմանը Հայաստանում, տարածաշրջանում և սփյուռքում: Սկզբում ունենալով ուսանողների փոքրիկ խումբ՝ համալսարանն արագ աճեց, և այժմ այստեղ սովորում է ավելի քան 1300 ուսանող՝ Հայաստանից և այլ երկրներից:

«Գլաձորն» արդեն կենսագրություն ունի: Հարուստ կենսագրություն: Ու եթե այսօր կարիք լինի մի քանի էջում ամփոփել այն, ժամանակագրություն կազմել, դժվար կլինի: «Նոր Գլաձորի» 1998թ.-ի համարներից մեկում լույս տեսավ դոցենտ Աշոտ Սարգսյանի (Աստված հոգին լուսավորի) հոդվածը՝ «Վստահ սկիզբ ու բեղուն շարունակություն» վերնագրով: Այն համալսարանի անցած ուղին էր՝ քարքարոտ ու դժվարին, և ներկան՝ աներեր, հույսով լեցուն: Այսօր այդ հույսերն արդարացված են, սպասումները՝ լիովի:

«Գլաձոր» համալսարանը՝ նախադեպը չունեցող առաջին ոչ պետական կրթօջախներից մեկն սկսեց գործել նախկին Կուտուզով փողոցում գտնվող միջնակարգ դպրոցում, այնուհետև տեղափոխվեց Շահումյանի անվան թիվ 1 դպրոց: Նեղիկ սենյակներ, ուսումնական, տեխնիկական սուղ միջոցներ, փոքր աշխատակազմ, բայց ուսումնական գործընթաց, որքան էլ զարմանալի, հնարավոր եղավ կազմակերպել: Ու այն էլ ինչ որակով: Միայն 2000թ.-ին, երբ բուհն արդեն 10 տարվա կենսագրություն ուներ ու շնորհիվ հիմնադիրներ Ժորա Ջհանգիրյանի, Ամալյա Խառատյանի և մի շարք այլ նվիրյալների կանգուն էր աներեր, «Գլաձոր» համալսարանն անունը գրվեց նորակառույց հարմարավետ շենքի ճակատամասին: Դրա կարիքը դեռ շատ վաղուց կար. ուսանողների թիվն էր մեծացել, նոր ֆակուլտետներ էին բացվել...

2001թ. հուլիսի 25-ին, բուհը հավատարմագրվեց Հայաստանի Կրթության և գիտության նախարարության կողմից: Այլ կերպ այլևս հնարավոր էլ չէր. «Գլաձորն» ի սկզբանե իր ուսանողների մասնագիտական կատարելությանն է ձգտել միջազգային չափանիշներին համապատասխան ծրագրերի միջոցով:

Ժնևում անցկացված «Բիզնեսում բարձր որակ» իններորդ միջազգային ֆորումում համանուն միջազգային ֆոնդի կողմից 2005թ. աշնանը «Գլաձոր» համալսարանին շնորհվեց Ոսկե մեդալ՝ «Աշխատանքային գործունեության մեջ բարձր որակի համար», ինչպես նաև՝ ֆոնդի հռչակագրին «Գլաձոր» համալսարանի անդամակցության մասին վկայագիր:

2006-2007 ուսումնական տարվանից բուհում ներդրվեց ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման կրեդիտային համակարգը: Այս աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար Երևանի «Գլաձոր» համալսարանում սկսեց գործել է Կրթական բարեփոխումների կենտրոնը, որն իրականացնում է կրեդիտային համակարգի ներդրման համար անհրաժեշտ նորմատիվային բազայի ստեղծման աշխատանքները:

Համալսարանի ստեղծման առաջին տարիներին դիմորդներին մի խնդիր էր հուզում. ձեռք բերելով գիտելիքներ, ունենալով «Գլաձորի» ավարտական վկայական, կկարողանա՞ն ճանապարհ գտնել կյանքում, կկարողանա՞ն ձեռք բերել աշխատանք իրենց մասնագիտությամբ: Այսօր այդ հարցին լավագույն պատասխանողներն են «Գլաձորի» շրջանավարտները, որ աշխատում ու բարձր

պաշտոններ են զբաղեցնում իրավապահ մարմիններում, Սահմանադրական դատարանում, նախարարություններում, ֆինանսաբանկային համակարգում, թերթերի խմբագրություններում, հեռուստառադիոընկերություններում, դպրոցներում և այլուր:

Հիմնադրման առաջին տարիներին ո՞վ կարող էր մտածել, որ «Գլաձորի» քսաներորդ տարեդարձին 18 գլաձորցի գիտության թեկնածու կարող է լինել, որ նրանցից ոմանք արդեն դոցենտի կոչման արժանացած կլինեն, որ կսկսեն մտմտալ դոկտորական ատենախոսության թեմաներ ընտրելու շուրջ, որ...

...Որ տարիների նպատակալաց աշխատանքի ու նվիրվածության շնորհիվ «Գլաձոր» այսօր կնշանակի ինչպես համալսարան, այնպես էլ դպրոց, մագիստրատուրա, ասպիրանտուրա...

Լինենք ինքնավստահ



«Գլաձոր» համալսարանի հերթական հյուրը ՎիվաՍել-ՄՏՄ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն էր: Ուսանողների հետ հանդիպումը նպատակ ուներ ծանոթացնել ընկերության գործունեության ձևերին, ներկայացնել կատարված ու կատարվելիք աշխատանքները, բացահայտել աշխատատեղը, որը հնարավորություն է տալիս ՎիվաՍել-ՄՏՄ-ին գործունեությունը հաջող իրականացնել և հասնել նկատելի ձեռքբերումների: Ռալֆ Յիրիկյանը սիրով պատասխանեց գլաձորցիների բոլոր հարցերին, որոնք վերաբերվում էին ինչպես ՎիվաՍել-ՄՏՄ-ին, այնպես էլ համաշխարհային տնտեսությանը սպառնացող

ճգնաժամային իրավիճակին, մեր երկրի տնտեսության կայունության պահպանմանն ու զարգացմանը, երիտասարդների համար նոր աշխատատեղերի ստեղծմանը, «Գլաձոր» համալսարան-ՎիվաՍել-ՄՏՄ ապագա համագործակցությանը և այլն:

Ռալֆ Յիրիկյանը գործարար է, տնտեսական գործիչ, սոցիալական խնդիրներին լուծում տվող կամ պարզապես հայրողի, ով փորձում է նպաստել ազգի բարօրությանը, ապա նաև տնտեսության զարգացմանը: Լիբանանում երկար ժամանակ աշխատել է կապի ոլորտում: Առաջին անգամ նախ 40 օրով, ապա 6 ամսով Հայաստան է գործուղվել 2001թ.՝ նոր ստեղծվող Ղարաբաղ Տելեկոմի աջակցելու: Վեցամյա գործուղումը երկարաձգվել է. արդեն ութ տարի Ռ. Յիրիկյանն աշխատում է Հայաստանում:

«Գլաձոր» համալսարանը, ի դեմս ռեկտոր Ժորա Ջհանգիրյանի, Ռալֆ Յիրիկյանին հաճույքով հյուրընկալելուց գատ, ի նշան շնորհակալության՝ հասարակությանը ցուցաբերած օժանդակության և վստահելի կազմակերպություն լինելու պարզևատրեց Երևանի «Գլաձոր» համալսարանի Ոսկե հուշամեդալով: Հուսանք՝ երկու կազմակերպությունների համագործակցության երկկողմանի շահագրգռվածությունը հետագայում ճանապարհ կհարթի վերջիններիս բարեկամական հարաբերությունների հաստատման և համատեղ աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

- Պարոն Յիրիկյան, որո՞նք են ընկերության հաջողություններն ապահովող գրավականները:
- Երբ գործի մեջ կարևորվում և պարտադիր են դառնում մարդկային արժեքների պահպանումը, աշխատանքային ազնիվ փոխհարաբերությունները, պրոֆեսիոնալիզմը, առաջին հայացքից անհնարինը դառնում է հնարավոր, և հաջողությունն իրեն սպասել չի տալիս: Ամեն ինչ, սակայն, ինչպես կարող է ասվածից թվալ, այդքան հեշտ չէ: Մեր ընկերությունում ձևավորվել են չափազանց կարևոր երեք սկզբունքներ՝ պետք է լինել պարզ, պետք է լինել հասարակ, պետք է լինել թափանցիկ թե՛ բաժնետերերի, թե՛ բաժանորդների հետ, թե՛ տնտեսական տարբեր փոխհարաբերություններում: Այս երեք արժեքների վրա հենվելով էլ մենք կարողանում ենք մեր գործունեությունը հաջող

իրականացնել և հասնել նկատելի ձեռքբերումների: Մեկ հանգամանք ևս՝ մենք հավատում ենք մեր ձեռնարկած գործի իրականացմանը. դա ևս հաջողություն ապահովող նախապայման է:

- ՎիվաՄեյ-ՄՏՄ ընկերության 2010 թվականի ծրագրերի շարքում է նաև 4-րդ սերնդի ծառայությունների սպասարկման իրականացումը: Ի՞նչ է դա իրենից ներկայացնում:

- Խոսքը կապի ոլորտում մի նոր տեխնոլոգիայի ներմուծման մասին է, որը շահագործվում է հատուկենտ երկրներում: ՎիվաՄեյ-ՄՏՄ-ը շարունակաբար զարգացնում է իր ցանցը՝ ներդնելով նոր տեխնոլոգիաներ, բարձրացնելով ծառայությունների որակը: Այսպիսով ուզում ենք, որ Հայաստանը դառնա 4-րդ սերնդի տեխնոլոգիան առաջինն օգտագործողներից մեկը տարածաշրջանում: Այս հանգամանքը կնպաստի մեր երկրի հեղինակության բարձրացմանն աշխարհում:

- Այս տարի հուլիսի 1-ին լրանալու է ՎիվաՄեյ-ՄՏՄ-ի՝ կոմերցիոն շուկա մտնելու 5-ամյակը: Ի՞նչ ակնկալիքներ կարող են ունենալ բաժանորդները:

- Չեմ կարող փակագծեր բացել. կոմերցիոն գաղտնիք է, հատկապես մրցակցային դաշտի առումով, բայց կարող եմ ասել՝ սպասեք ավելիին:

- Orange ընկերության մուտքն ինքնաբերաբար հանգեցրեց նոր մրցակցության: Որո՞նք են արդյունքները:

- Շուկայում գործընկեր-մրցակից ունենալը միշտ էլ զգաստացնում է և խթան հանդիսանում կրկին վերազինվելու, պատշաճ մակարդակով մրցակցելու և առաջատարի դիրքը պահպանելու համար:

- ՎիվաՄեյ-ՄՏՄ-ը գործընկերների պակաս չունի: Այնուամենայնիվ, նոր համագործակցություններ նախատեսվո՞ւմ են:

- Մենք շատ գործընկերներ ունենք: Կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում նրանց թիվն ամեն տարի համարվում է: Այս տարի ևս շարունակելու ենք լինել մշակույթի բարեկամ և իրականացնելու ենք մշակույթի, սպորտի, բնապահպանության զարգացմանն ուղղված ծրագրեր: Շարունակելու ենք աշխատել ուսանողության և երեխաների հետ:

- Ի՞նչ ասել է կորպորատիվ պատասխանատվություն:

- Կորպորատիվ պատասխանատվությունը պետության, հասարակության, ընկերության աշխատակիցների և նրանց ընտանիքների նկատմամբ հոգածության դրսևորումն է: Յուրաքանչյուր կազմակերպություն կարող է և պարտավոր է լինել պատասխանատու: Դրա համար հարկավոր է ունենալ բարոյական արժեքների վրա ձևավորված համակարգ և հավատալ իրականացվող քայլերին:

- Համաձայնե՞ք՝ քիչ հավանական է լինել գործարար և շահել հայ հասարակության համակրանքը: Դա Ձեզ հաջողվել է: Ի՞նչ եք կարծում՝ գլխավոր պատճառը սոցիալապես խոցելի խավերին մշտապես աջակցե՞լն է, թե՞...

- Յուրաքանչյուր պատասխանատու ընկերություն պետք է ձեռք մեկնի օգնության կարիք ունեցողներին: Մեր ընկերությունն էլ բացառություն չէ: Այս հանգամանքը, անշուշտ, պատճառ է, բայց ոչ միակը, քանի որ մեր գործունեության ընդամենը մի կողմն է: Կարծում եմ, որ մեր ընտանիքի՝ ՎիվաՄեյ-ՄՏՄ-ի հանդեպ հասարակության անկեղծ վերաբերմունքի միակ պատճառը թոշակառուներին, հաշմանդամներին, անօթևան մարդկանց ուշադրություն դարձնելը չէ: Գնահատվում է նաև բաժանորդների հանդեպ բարեկիրթ վերաբերմունքը, ծառայությունների բարձրակարգ սպասարկումը, աշխատակազմի վարվեցողությունը և այլն: Մեր ընկերությունը կարողացել և կարողանում է պատշաճ կատարել ստանձնած պարտականությունները: Ավելին: Մենք տեր ենք կանգնում մեր խոսքին՝ շարունակում ենք լինել պարզ, հասարակ և թափանցիկ: Այս սկզբունքները ևս բարձրացրել են մեր ընկերության, մեր ապրանքանիշի վարկը: Մենք արժանացել ենք հասարակության վստահությանը, վստահվել ենք հարգանք, որ պետք է ամեն գնով պահպանել:

- Պարբերաբար հանդիպում եք թե՛ մարզերի, թե՛ մայրաքաղաքի ուսանողների հետ: Ո՞րն է հիմնական նպատակը:

- Նախ այն, որ ուզում ենք ուսանողներին հնարավորինս աջակցել: Մենք կարող ենք հնարավորություն տալ, որ նրանք ՎիվաՄեյ-ՄՏՄ այցելեն, տեսնեն, թե ինչպես է աշխատում ընկերությունը, իրենց տեսական, գործնական գիտելիքների վրա ավելացնեն նոր փորձառություն՝ մեր ընկերության գործունեության օրինակով: Ուսանողների հետ հանդիպումների կարևորագույն նպատակը նաև մեր գործով ապացուցելն է, որ հուսահատվել բնավ պետք չէ, և լավագույնը առջևում է: Մենք էլ ենք գրոյից սկսել. երբ կառուցվում էր ընկերությունը, ՎիվաՄեյ-ՄՏՄ ընտանիքի անդամներից շատերը նորաթուխ շրջանավարտներ էին, չունեին աշխատանք, բայց վստահ էին իրենց ուժերի նկատմամբ: Մենք ուզում ենք մասնակից դառնալ, նպաստել ուսանողի ինքնավստահության ձևավորմանը, ամրապնդմանը:

- Երիտասարդին տալ ինքնահաստատվելու հնարավորություն, որ անմիջականորեն կապվում է մեր հասարակության արժեքային համակարգի ձևավորման հետ:

- Անշուշտ: Մեր ընկերություն այցելած ուսանողը, տեսնելով նման աշխատատեղ, ընդօրինակում է, աշխատանքային և մարդկային փոխհարաբերություններում կարևորը տարբերում է երկրորդականից,

սկսում է կրթել մասնագիտական վարքագիծը, որը կարևոր է արժեքային համակարգի ձևավորման համար:

- Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի շնորհած «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի Ոսկե մեդալի և այլ պարգևների կողքին Երևանի «Գլաձոր» համալսարանի Ոսկե հուշամեդալն ինչո՞վ է նշանավորվում:

- Սա առաջինը չէ, բայց նախորդների նման պարտավորեցնող է: Այսպիսի պարգևները ստիպում են ևս մեկ անգամ համոզվել, որ ընտրած ճանապարհը ճիշտ է, և պետք է շարունակել օրինակ ծառայել, սովորել ու սովորեցնել ՎիվաՄեյ-ՄՏՄ-ի անդամներին և հատկապես իմ ընտանիքին: Երեխաներս կհասկանան՝ ինչն է պատճառն այսպիսի պարգևների, կհասկանան՝ ինչքան կարևոր է աշխատանքի հանդեպ պատասխանատու մոտեցումը և կընդօրինակեն:

- Ինչպիսի՞ տպավորություններով եք հեռանում մեր համալսարանից:

- Ուսանողների հետ շփումը միշտ էլ հաճելի է: Առավել ևս, երբ տեսնում ես ընկալող հայացքներ: Ինձ ուղղված բազմաբնույթ հարցերն էլ վկայում էին ուսանողների բարձր պատրաստվածության մասին:

Հանդիպումն անցավ ջերմ մթնոլորտում, առիթ եղավ խոսելու մեր ընկերության ստեղծման, ընդհանուր գործունեության, դրան առնչվող տարբեր հարցերի շուրջ՝ ինչ-որ չափով նպաստելով նաև ուսանողների՝ ապագայի հանդեպ վստահության ձևավորմանը:

- Մեր բուհի հետ համագործակցելու ակնկալիքներ կա՞ն:

- Սպասում ենք ձեզ, որ այցելեք մեզ: Կհամագործակցենք, ինչպես կրթական այլ հաստատությունների հետ:

Հ.Գ. փոխարեն՝

- Ի՞նչ է հայրենիքը լիբանանահայ գործարարի համար:

- Հայրենիքը Հայաստանն է: Հայրենիքի հանդեպ զգացողությունները բոլորովին այլ են ծննդավայրի հանդեպ տածածի համեմատությամբ: Հայրենիքի համար չպետք է խնայել որևէ բան: Եթե հոգուս Հայաստանի՝ ուրեմն պետք չէ երկու անգամ մտածել: Հարկավոր է անմիջապես գործել, բարի գործով օրինակ ծառայել ուրիշների համար:

- Դժվար չէ՞ այլ քաղաքակրթության մեջ մեծանալուց հետո ապրել հայ իրականության մեջ:

- Գիտե՞ք՝ երբ ունես ձգտումներ ու նպատակներ, որոնց կյանքի կոչելը ծառայում է նաև համընդհանուրի ձգտումների ու նպատակների իրականացմանը, ուրեմն պետք է համակերպվել այն ամենի հետ, ինչ առաջարկում է քեզ միջավայրը: Սակայն մի վերապահումով. ընդունել լավը՝ վատը հնարավորինս ուղղելու անխնա ջանքերով: Հետևաբար դժվար չէ ապրել և աշխատել հայ իրականության մեջ: Բացի այդ՝ մարդը չի կարող ուրանալ իր արմատները, իր ինքնությունը: Մենք՝ հայերս հատկապես, քանի որ առանձնահատուկ մշակույթ, մտածելակերպ, սովորույթներ ունենք, որոնք առավելագույն ուշադրության են արժանի: Ուրեմն, լինելով հայ, ապրելով հայ միջավայրի մեջ՝ պետք է հզորացնենք մեր երկիրը, տեսնենք և ուղղենք սխալները՝ տարածելով միմիայն լավը:

Արմինե ԽԱՉԻԿՅԱՆ

Համալսարանի խորհրդում

Տեղի ունեցավ Երևանի «Գլաձոր» համալսարանի գիտական ընկերության հերթական՝ 2010թ. առաջին նիստը, որի ժամանակ գիտխորհրդի անդամներն անդրադարձան 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսումնական ստորաբաժանումների խնդիրներին:

Բուհի նոր հավատարմագրումն իր պահանջներն է ներկայացնում համալսարանականներին: Կարևորվում են առարկայական թարմացված ծրագրերի, ուսումնական պլանների, կուրսային և դիպլոմային աշխատանքների թարմացված թեմատիկայի առկայությունը, ամբիոնների նիստերի արձանագրությունները և այլն: Այս ամենին նիստի ժամանակ անդրադարձավ գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր, պրոֆեսոր Ժ.Գ.Ջհանգիրյանը: Հավատարմագրման գործընթացում ամեն տեսակ բացթողումներից ու թերություններից խուսափելու համար որոշվեց ուսումնական բոլոր ստորաբաժանումներում վերակառուցել աշխատանքները Կրթության և գիտության նախարարության՝ բուհերի հավատարմագրման պահանջներին համապատասխան:

Գիտխորհրդի՝ օրակագով նախատեսված քննարկման ենթակա երկրորդ հարցը վերաբերվում էր Միջազգային հարաբերությունների և պատմության ամբիոնում գիտահետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների դրվածքին: Այս հարցերի շուրջ ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ, դոցենտ Լիլիթ Հովհաննիսյանը՝ անդրադառնալով ֆակուլտետում տիրող վիճակին, նախորդ

կիսամյակի ընթացքում ունեցած ձեռքբերումներին, ինչպես նաև թերացումներին, ներկայացրեց ընթացիկ կիսամյակում նախատեսվող ու արդեն իսկ կատարվող աշխատանքները:

Այնուհետև գիտխորհրդի անդամները լսեցին ասպիրանտուրայի բաժնի վարիչ Հասմիկ Ստեփանյանին: Վերջինս ներկայացրեց իրավագիտության ամբիոնի հայցորդ Տաթևիկ Սիմոնյանի գիտական ղեկավար՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Սաֆարյանի՝ գիտական ղեկավարությունից հրաժարվելու և իրավագիտության դոկտոր Աշոտ Խաչատրյանին գիտական ղեկավար նշանակելու, Ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտներ Նոնա Բաղդասարյանի և Շուշանիկ Չատուրցի (գիտական ղեկավար՝ Լ. Արյան) ատենախոսության թեմաների փոփոխության մասին: Քննարկվեց ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի հայցորդ Արտյոմ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը, ինչի արդյունքում գիտխորհուրդը որոշեց ատենախոսության թեման հաստատել «Արտաքին առևտրի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ: Գիտական ղեկավար նշանակվեց տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Աղասի Հովակիմյանը:

Նիստի ավարտին եղան ընթացիկ հարցեր: Քննարկվեց ասպիրանտուրայի բաժնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու Հասմիկ Ստեփանյանի «ՀՀ քաղաքացիների իրավահավասարության սահմանադրաիրավական հիմունքները» թեմայով մենագրության հրատարակման երաշխավորության (մասնագիտական խմբագիր՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Հասմիկ Ենգոյան), ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի դոկտորանտ, տնտեսագիտության թեկնածու Տիգրան Հակոբյանի «Գործարարության զարգացման գերակայություններն ու հարկային քաղաքականության առանձնահատկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում» թեմայով մենագրության տպագրության երաշխավորության հարցերը (գիտական խորհրդատու՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Յու.Մուվարյան): Մենագրությունները երաշխավորվեցին տպագրության:

Հ. Ս.

«Քննում» են ուսանողները

Ամենաբարի մասնագիտությունը՝ տնտեսագիտություն...

Մամվել Գրիգորյան - ծնվել է 1953թ.-ին Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղում: Գերագանցությամբ ավարտելով տեղի դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետ: Բուիը գերագանցությամբ ավարտելուց հետո աշխատանքի է անցել ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի բազայի վրա ձևավորված ժողովրդական տնտեսության ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնում: Այժմ Ս. Գրիգորյանն աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում որպես դոցենտ և միաժամանակ Կառավարման ֆակուլտետի ղեկանի տեղակալ:

«Գլաձոր» համալսարանի ստեղծման 2-րդ տարվանից դասավանդում է «Տնտեսագիտության տեսություն», «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» դասընթացները: Տնտեսագիտական 7 ուսումնական ձեռնարկների համահեղինակ է, հրատարակել է 50-ից ավել գիտական և գիտաուսումնական աշխատանքներ: Ամուսնացած է, ունի 2 աղջիկ, 1 տղա և 1 թոռնիկ՝ Լևոնը:



- Պարո՞ն Գրիգորյան, ի՞նչ լեզվով են խոսում տնտեսագիտության բանալիները՝ թվերը:
- Տնտեսագետն առանց փաստերի, թվական տվյալների մնան է առանց թևերի թռչունի կամ առանց կտուցի արծվի: Խոսքերը հիմնավորումներ պետք է ունենան, որպեսզի տնտեսագետը կարողանա դրանք վերլուծելով տեսական եզրահանգումներ կատարել, իսկ տեսական դրույթներն էլ կարողանա հիմնավորել փաստացի նյութերով: Փաստերը շատ կարևոր և խոսում պետք է լինեն, որպեսզի

տնտեսագետն իր միտքը հիմնավորելու, ավելի արտահայտիչ դարձնելու համար դրանք որպես գործիք օգտագործի: Չնայած՝ տեսությունն ու պրակտիկան շատ հաճախ իրար հակասում են:

- Կարողանում եք փող կուտակել:

- Ցավոք սրտի՝ չի ստացվում. գրպանիս գումարը որքան շատ է լինում, այնքան շատ եմ ծախսում: Անգլիական ասացվածքի համաձայն՝ տնտեսագետն այն մարդն է, ով փող չունենալով՝ բոլորին սովորեցնում է, թե ինչպես փող աշխատել: Սակայն քիչ տնտեսագետների է հաջողվել տնտեսագիտության տեսական դրույթները զուգակցել բիզնեսի հետ: Ես էլ տնտեսագետների այն տեսակին եմ պատկանում, ով ավելի շատ սիրում է ծախսել այսօր՝ հանուն ընտանիքի բարօրության, քան մտածել՝ վաղն ինչ է լինելու: Այսինքն՝ ինձ համար ավելի գերադասելի է այսօր «ճնճողուկը ձեռքիս, քան վաղը՝ կռունկը օդում»: Շատ եմ փող ծախսում գրքեր գնելով. ունեմ հարուստ մասնագիտական գրադարան, որն ինձ մեծ գոհունակություն է պարգևում, քանզի տնտեսագիտության ժամանակակից մոտեցումներին եմ կարողանում իրազեկ լինել և ինձ անկաշկանդ ու ազատ զգալ իմ մասնագիտության բնագավառում:

- Փաստորեն կուտակել չի ստացվում, իսկ փող հաշվել սիրո՞ւմ եք:

- Ո՛չ: Հաճախ գրպանումս դրանք շատ խառն են լինում ու չեմ էլ մտահոգվում, թե որքան գումար կա այնտեղ, սակայն երբ զգում եմ, որ պակասում է, անհանգստանում եմ: Չեմ հաշվում, որպեսզի այն «ավելանա»: Մտածում եմ՝ որքան շատ ծախսեմ, այնքան հետագայում կավելանա գումարս, ինչպես երբ ծառի ճյաղերը պարբերաբար էտում են, այն ավելի է փարթամանում, ոչ թե սլացիկ վեր է բարձրանում, այլ տարածվում է՝ իր սովերով և օգտակար լինելով մարդկանց ու շրջապատին:

- Ըստ Ձեզ՝ ո՞րն է ամենաբարի մասնագիտությունը:

- Ես իմ մասնագիտությունը՝ տնտեսագիտությունն եմ այդպիսին համարում: Օրինակ՝ բժշկի մասնագիտությունը շատ բարի է, սակայն, եթե բժիշկն ինչ-որ հարցում սխալվի, դա կարող է շատ տհաճ հետևանքներ ունենալ: Իսկ եթե տնտեսագետն է սխալվում, հետևանքները ուշ են ի հայտ գալիս, չնայած նրա սխալն էլ ֆիրմայի, երկրի տնտեսությանը կարող է վնասել: Յուրաքանչյուրս պետք է սիրենք մեր մասնագիտությունը, լինենք պրոֆեսիոնալ և անենք այնպես, որ մյուսներն էլ այն սիրեն, այդ դեպքում մենք մեզ հարգված և գնահատված կզգանք: Հետևաբար, յուրաքանչյուրն իր ոլորտում պետք է վարպետ լինի:

- Եթե նորից մասնագիտության ընտրության առջև կանգնեիք, կրկին տնտեսագիտությունը կընտրեիք:

- Նորից ընտրելու դեպքում, էլի կկարևորեի իմ տնտեսագետ տեսաբանի մասնագիտությունը, քանզի ինչպես նշել է անգլիացի նշանավոր տնտեսագետ Ջոն Բեյնսը՝ տնտեսագետների ու քաղաքագետների գաղափարներն են կառավարում աշխարհը: Ինձ այլ բնագավառում, բուհից դուրս չեմ պատկերացնում: Հոգով ես միշտ երիտասարդ եմ, որովհետև ուսանողների հետ եմ շփվում և նրանց շրջապատում ինձ լավ եմ զգում:

- Ո՞ր ժամանակներում կուզեիք ապրել:

- Այլ էին իմ երիտասարդության տարիները, այն ժամանակ ուսանողն իր կրթաթոշակով կարող էր ինքնուրույն գոյատևել (ինքս հանրակացարանում եմ ապրել): Ուսանողական կյանքս շատ աշխույժ էր անցնում: Ներկայումս, ճիշտ է, ֆինանսական միջոցներ կան, բայց հոգսերն ու դժվարություններն էլ են ավելացել: Այն ժամանակ պետությունը շատ հոգսեր իր վրա էր վերցրել, իսկ հիմա ինքն է դժվարությունների առաջ կանգնած: Այսօր կյանքն այլ հետաքրքրություններ ունի: Կարծում եմ՝ ապագան խոստումնալից է:

- Ճակատագրական հանդիպումներ ունեցե՞լ եք:

- Ես իմ բնավորությամբ ֆատալիստ եմ (ճակատագրապաշտ): Շատ հարցերի ու բարդությունների մատների արանքով եմ նայում՝ մտածելով, որ ին լինելու է՝ կլինի, անկախ այն բանից՝ ցանկանո՞ւմ եմ, թե՞ ոչ, դրա դեմ կպայքարե՞մ, թե սպասողական վիճակում կլինեմ: Դրա համար ամեն իրադրություն ես համարում եմ օրինաչափ և բնական:

- Չղջալու շա՞տ բան ունեք:

- Ո՛չ այնքան: Կարող էի ժամանակին շատ ավելին անել, ավելին ստեղծել, բայց չեմ արել: Չնայած, կարծում եմ՝ հիմա էլ ուշ չէ:

- Մարդկանց ցանկություններն ու երազանքները ժամանակի ընթացքում իրականանում են, փոխվում: Պարոն Գրիգորյան, այսօր ի՞նչ ցանկություն ունեք:

- Այս պահի ցանկություններս առնչվում են տղայիս: Նոր է ընդունվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ցանկանում եմ, որ բարեհաջող ավարտի ուսումը, կյանքում գտնի իր տեղը, ունենա աշխատանք, ընտանիք կազմի ու ինձ թոռներ պարզկի:

«Բննող» ուսանող՝

Հայկուշ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Ժուռն. ֆակ. III կուրս

«Իմ շահույթը մարդկանց գնահատականն է»



Ասում են՝ մարդիկ մի քանի կյանքով են ապրում: Ու թեև հաջորդ կյանքում չեն ապրում ինչպես նախորդում, այնուամենայնիվ, ինչ-որ հատկություններ, բնավորության ինչ-որ գծեր պահպանում են: Օրինակ՝ Դանիել Ջիանգիրյանը, ով անցյալ կյանքում, ըստ աստղագետ Էյա Հովհաննիսյանի՝ ինժեներ (կամ ճարտարագետ) է եղել, թեև մասնագիտությամբ տնտեսագետ է, տնտեսագիտության թեկնածու, այսօր քաղաքներ ու փողոցներ է կառուցում: Մոդելավորող-մակետավորող է: Հետաքրքրվողներին, թե ինչով է զբաղված իր աշխատասենյակում (խոսքը գրասենյակի մասին չէ) արդեն չորս

մակետով հիացնելու հնարավորություն ունի Դանիելը: Մակայն, որպես կանոն, բոլորը, մտնելով սենյակ, մի մարդու պես մոտենում են առաջին աշխատանքին՝ ամենամեծ մակետին: Այն մի իրական քաղաք է՝ մարդաշատ փողոցներով ու բակերով, երկաթուղով ու քաղաքային տրանսպորտով, խանութներով ու բնակելի բարձրահարկերով, զբոսայգիներով ու գիշերային ակումբով անգամ: Այս քաղաք-ստեղծագործությունն իրականությունը փոքրացրել է 86 անգամ: Սա «ճարտարապետի» առաջին աշխատանքն է, որի «շինարարությունը» թեև սկսվել է 2004թ.-ին, սակայն գաղափարն ու ցանկությունը դեռ շատ վաղուց՝ 1993 թ.-ին են առաջացել: Մակայն ինչպես և կարելի էր պատկերացնել՝ մութ ու ցուրտ ժամանակները, նյութերի պակասը հնարավորություն չեն տվել այն ժամանակ իրականություն դարձնել մտքերը: «Մակետներն անվերջ ստեղծագործական աշխատանք են ենթադրում: Երբ նոր էի ձեռնամուխ եղել իմ այս քաղաքի կառուցմանը, ամենևին չէի պատկերացնում, թե ինչ կստացվի արդյունքում: Հիմա էլ կարծես ավարտուն տեսք ունի մակետը, բայց գործ դեռ շատ կա», - պատմում է Դանիելը:

Մակետի մեծությունը՝ 2մ լայնք ու 3մ երկարություն, պայմանավորում է սարը, որ սկզբում է կառուցվել. «Ամեն ինչ բնականաբար համաչափ պիտի լիներ սարին: Այդ ժամանակ դեռ չէի պատկերացնում, թե որքան գումար են ծախսելու «շինարարության» վրա», - ասում է նա ու ձեռքերը ճտճտացնելով խոստովանում, որ միայն մակետն ավարտելուց հետո է պարզել 2.5 տարվա ընթացքում ծախսած գումարը՝ 1մլն 285 հազար դրամ: Աշխատանքներից մեկը վաճառվել է, սակայն Դանիելի նպատակը ոչ թե գումարները ետ բերելն է եղել, կամ ավելի պարզ՝ բիզնես անելը, այլ՝ «Իմ շահույթը մարդկանց գնահատականն է: Եթե գնում են, ուրեմն արժևորում են իմ գործը, իսկ ավելին

ինձ հարկավոր չէ»: Ի՞նչ նպատակով պետք է օգտագործվեր վաճառված մակետի գումարը, եթե ոչ նոր նյութեր գնելու: Նոր մակետների ծնունդ տալու նպատակով Դանիելը այդ փողով Գերմանիայից նյութեր է պատվիրում:

Ամենքս որոշակի խանդով ենք վերաբերվում մեր ստեղծածին՝ թեկուզև այն լինի փոքրիկ հուշանվեր: Ուրեմն ինչպե՞ս կարելի է չխանդել ստեղծագործությանը, որը մարդու կյանքից խլում, բայց և միևնույն ժամանակ նվիրում է երկու և կես տարի: «Խանդ ասվածն այս պարագայում չեն ընկալում, միայն շատ վախենում են մարդիկ վնասեն մակետները, հատկապես զայրանում են, երբ փոքրիկ





մեքենաներով ու գնացքներով սկսում են խաղալ, ձեռք են տալիս նուրբ նյութերին: Ախր դրանք այնքան փխրուն են, ու ես էլ այնպիսի զգուշությամբ եմ պատրաստել», -ասում է նա:

«Ինչ գիժ ես»: Այսպես են հաճախ արձագանքում մակետն առաջին անգամ տեսնողները: Վիրավորվելու մասին չի էլ մտածում, ավելին, ուրախանում է, երբ աշխարհի որևէ անկյունից հայտնվում է իր նման մի «խենթ», ում հետ կարող է նոր մտահղացումները փոխանակել: Այդ «գժերից» էր նաև Գեղամը, ով երկար ժամանակ սիրով քննարկում և օգնում էր «կառուցել» «մեծ» քաղաքի այս կամ այն հատվածը. «Գեղամի հետ ծանոթացա շատ պատահական ու, երբ իմացա, որ նա ոչ թե

կոլեկցիոներ է, այլ մոդելավորող, շատ ուրախացա (կոլեկցիոներների կարելի է գտնել մեր քաղաքում, իսկ մոդելավորողներ, ցավոք, չկան): Միասին շատ ենք աշխատել ու մտածել: Ափսոս, որ նա այլևս մեր կողքին չէ»: Մոդելավորողը նախանձով է խոսում գերմանացի ամուսինների մասին, ովքեր, շրջելով քաղաքից քաղաք, հետաքրքրասերներին ցույց են տալիս իրենց հսկայական մակետը: «Երջանկություն է կողքիդ ունենալ մեկը, ով կհասկանա քեզ, այս դեպքում հետո կխաղա այս խաղը՝ մեծերի համար», -մեր գրույցի ավարտին ասում է «ճարտարապետը»:

Դանիելն իր աշխարհը ստեղծելիս կտրվում է առօրյայից, աշխարհիկ կյանքից, մոռանում, որ իր փոքրիկ քաղաքից դուրս մեծ աշխարհ էլ գոյություն ունի: Հնարավոր է՝ երջանիկ լինելու գրավականն է այսպիսի կենսակերպում թաքնված. չէ՞ որ ամենքս երազում ենք մի պահ կրկին մանկանալ:

Զարուհի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Իրավ. ֆակ., IV կուրս

Սիրո հասակ Ինձ ոչինչ չնվիրես



Ինձ հաճախ հարցնում են՝ սիրում ես նվեր ստանա՞լ, թե՞ նվիրել: Իսկ ես պատասխանում եմ՝ նվիրել: Նվիրել, քանի որ քո նվիրած ծաղիկներն ու հայելին ինձ համար դարձան տխրության խորհրդանիշ: Այն ծաղիկները, որ ստանալիս մեծ երջանկություն ապրեցի, այլևս չեմ սիրում: Չեմ սիրում նաև հայելին, որի մեջ նայելիս միշտ տեսնում էի մեզ՝ երկուսիս, և ծաղիկները: Հիմա ծաղիկները թառամած են, իսկ հայելին բաժանվել է հարյուրավոր մասերի, որոնց մեջ տեսնում եմ մեր՝ միասին ապրած ամեն օրը, որոնք հիշելիս կրկին երջանկանում եմ: Հիմա մենք այլևս միասին չենք: Չկան այլևս ծաղիկներ և հայելի: Թեև խուսափում եմ կրկին քեզ հանդիպել, բայց գուցե պատահաբար մի օր պատահենք: Հիշիր,

խնդրում եմ, ինձ ոչինչ չնվիրես, քանի որ այսուհետ միայն ես եմ նվիրելու:

Մերի ԱՅՎԱԶՅԱՆ

ԱՆՍԱՅԱՍԵԼԻ անձրև

ԿԱՐԾՈՒՄ էի՝ երկար ու դժվար փնտրտուքից հետո քեզ կգտնեն ու վերջապես կլսեն այն բառերը, որ այնքան սպասված, բայց միևնույն ժամանակ անսպասելի էին: Շատերն էին ասում, և ինքս էլ քիչ-քիչ համոզվում էի, որ շատ եմ փոխվել, դարձել բոլորովին այլ մեկը՝ երազկոտ ու խանդավառ:

Գուցե պատահական է, գուցե՝ ոչ. երբ քեզ հանդիպեցի, աշխարհս փոխվեց, սկսեցի շուրջս միայն քեզ տեսնել, ամենուր քեզ պատկերացնել, քեզ և միայն քեզ...

Մեր հանդիպումն ասես ֆիլմից պոկված մի պատառիկ լինեք: Անսպասելի անձրևը հանդիպեցրեց մեզ ու դարձավ երկար փնտրած պատճառը մեր միության:

Անձրև ասելիս շատերը տխրում են, շատերը թախծում ու լաց են լինում: Իսկ ես խենթանում և ուրախանում եմ: Իմ անձրևի կաթիլները յուրահատուկ են ու խորհրդանշական: Նրանք ինձ մեծ ու հիասքանչ փոփոխություն նվիրեցին, նրանք ինձ քեզ պարզեցին:

Մ.Ա.

Ժուռն. ֆակ., II կուրս

Հիշողության կորուստ

Երանի կարողանալի ինչ-որ կերպ թարմացնել հիշողությունը: Երկու սավեր կանգնել էին դեմառդեմ և ողջունում էին իրենց բաժանումը... Էլ ոչինչ չկար... Կար բաժանում ու կեղեքիչ ցավ, մի քանի րոպե, որոնք դանդաղ էին ձգվում, ստիպում էին մեզ ծեծված վիրավորանքներ շարտել օդ:

Ամեն տեղ նույնն է՝ գրքերում, օդում, երակների մեջ, նույն դատարկությունն է հիշողության կորստի հետևանքով: Դու արդեն գտել ես քո ցավի երաժշտությունը, իսկ իմ շուրջը լռություն է, ու ոչ մի շշուկ չի վիրավորում տառապանքս: Դու ուզում ես անընդհատ լսել այդ մի քանի նոտաները, ծվատել ինքդ քեզ, խեղդել քեզ ցավով: Սնվում ես տառապանքով, վերանում ես, ցավով է լցվում շուրջդ: Դու քայլում ես փողոցներով, փողոցներով քայլում է ցավը: Մութացող ծերուկի երաժշտությունը սիրտ է կեղեքում, իսկ իմ աչքերից արցունքներ են հոսում, որոնք սառում են կես ճանապարհին: Ուզում եմ մոռանալ այս ամենը, ուզում եմ ջնջել քեզ գրողի տարած հիշողությունից:

Քեզ մոռանալ փորձող՝ Մարի

Սիրտս նվաղում է, բայց միտքս սթափ է

Մեր ծանոթության մի քանի ամիսներն իմ կյանքի լավագույն պահերն էին. պահերի պես էլ անցանչավեցին: Երբ կողքիս էիր, զգում էի, որ աշխարհի երեսին ապրում է մեկը, ում կարող եմ վստահել ու հավատալ, ում օգնությանը կարող եմ դիմել: Ավաղ երջանկությունս երկար չտևեց: Ասում էիր, որ սիրում ես, երջանիկ ենք լինելու, մեզ ոչ ոք և ոչինչ չի բաժանելու, բայց դրանք քեզ համար միայն դատարկ խոսքեր էին, իսկ ինձ համար՝ հույսերով լի ապագա: Հավատում ու վստահում էի, բայց դու թողեցիր ու հեռացար: Որոշ ժամանակ անց վերադարձար՝ պատճառելու նույն ցավերն ու տառապանքները: Հեռացիր ու մոռացիր: Դու արդեն փշրել ես սիրտս, երազանքներս: Ինչո՞ւ այդպես վարվեցիր, չէ՞ որ ես քեզ սիրել եմ միայն:

Հոգնել եմ անվերջ ներելուց ու հասկանալուց: Հեռացիր, այս անգամ՝ մեկընդմիջտ: Նախընտրում եմ ապրել քեզանից հեռու, բայց հանգիստ ու անարցունք:

Սյուզի ԴԵՎՈՆԴՅԱՆ

Ժուռն. ֆակ., II կուրս
